ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՆԸ, ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ Կ.ՊՈԼՍԻ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ

Մարիամ Յովսեփեան

Մուդրոսի զինադադարից[1] *յետոյ Հայկական հարցի լուծման համար ստեղծուած միջազգային բարենպաստ հանգամանքները մէկ-երկու տարուայ ընթացքում փոխւում են ի վնաս հայութեան նպատակների ու շահերի: Իրադարձութիւնների յետագայ ընթացքը նպաստում է յօգուտ Առաջին աշխարհամարտում պարտուած Օսմանեան Թուրքիայի կառավարման համակարգի վերափոխման եւ վերակազմաւորման: Այս համատեքստում կարեւոր մի քանի փաստի վրայ պէտք է ուշադրութիւն դարձնել: Յիշատակենք դրանք.*

- Փարիզի խաղաղութեան կոնֆերանսի երկարատեւ ընթացքն ու որոշումների կայացման ձգձգումները,

- Սեւրի հաշտութեան պայմանագրի անվաւեր մնալը եւ թէկուզ այդ վիճակով Թուրքիայի մասնատման կամ իրականում բաւական փոքր տարածքի վրայ դրա պահպանման վտանգի գործօնը,

- պատմութեան յորձանուտում Մուստաֆա Քեմալի յայտնուելը,

- Միլլի կամ Քեմալական շարժման յաղթարշաւը եւ Ազգային ուխտի հաւատամքի հռչակումը,

- Խորհրդային Ռուսաստանի յայտը միջազգային ասպարէզում եւ մասնաւորապէս Մուստաֆա Քեմալի հետ բազմակողմանի ու սերտ համագործակցութիւնը,

- Հայաստանի Առաջին հանրապետութեան անկումը եւ խորհրդայնացումը,

- Ալեքսանդրապոլի, Մոսկուայի եւ Կարսի պայմանագրերը,

- Լոնդոնի եւ Լոզանի խորհրդաժողովները եւ Լոզանի պայմանագիրը,

- Թուրքիայի Հանրապետութեան հռչակումը:

Վերլուծական հայեացք ձգելով պատմական յիշեալ կարճ ժամանակահատուածում Հայկական հարցին առնչուող բուռն իրադարձութիւնների ու դէպքերի, հայ-թուրքական, հայ-ռուսական, հայ-եւրոպական փոխյարաբերութիւնների եւ շփումների վրայ, պէտք է փաստել, որ ի տարբերութիւն դիւանագիտական ոլորտում նորաթուխ հայկական բանակցողների անփորձութեանն ու անճարակութեանը՝ թուրքական կողմը, հիմնուելով նախորդ դարերի փորձառութեան վրայ, օգտուելով Խորհրդային Ռուսաստանի եւ Անտանտի երկրների, ինչպէս նաեւ եւրոպական մեծ տէրութիւնների միջեւ առկայ աշխարհաքաղաքական շահերի բախումից՝ կարողանում է ոչ միայն, ինչպէս ժողովրդական առածն է ասում՝ «ջրից չոր դուրս գալ», այլեւ Լոզանում 1923 թուականի յուլիսի 24-ին կնքում է սեփական երկրի համար շահաւէտ հաշտութեան պայմանագիր:

Թուրքական իշխանութիւնները փորձում են մէկընդմիշտ ազատուել Հայկական հարցից: Նրանք դա արդէն սկսում են դիտարկել որպէս իրենց երկրում ապրող հայկական կրօնական փոքրամասնութեան ներքին խնդիր, որի լուծման գործին այլեւս իրաւունք չունէր խառնուելու միջազգային հանրութիւնը: Այս գործընթացների ու փո-

---

1 Մուդրոսի զինադադարը կնքուել է 1918 թուականի հոկտեմբերի 30-ին:

խուած աշխարհաքաղաքական պայմաններ-ի հետեւանքով դէ ֆակտոյ եւ դէ իւրէ իրաւիճակ է փոխւում հայոց պայքարի ակնկալիքների առումով:

Մեծ տէրութիւնները սկզբում հակւում են Արեւմտեան Հայաստանի որոշակի փոքր տարածքի վրայ կոտորածներից փրկուած արեւմտահայութեան համար ազգային օջախ կամ տուն հիմնելու[2] գաղափարին: 1921 թուականի փետրուարի 26-ից մարտի 12-ը տեղի ունեցած Լոնդոնի 3–րդ կոնֆերանսում, որտեղ ներկայ էին Առաջին աշխարհամարտի մասնակից պետութիւնները, առաջարկ է արւում վերանայել Սեւրի պայմանագրի՝ Հայկական հարցին վերաբերող յօդուածները[3]: Քննարկումներն աւարտւում են Թուրքիայի արեւելեան նահանգներում արեւմտահայոց օջախ հիմնելու յայտարարութեամբ, որի կայացման գործին աջակցելու համար որեւէ երկիր պարտաւորութիւն չէր ստանձնում: Թուրքական պատուիրակութիւնը մեժում է այդ առաջարկը: Այնուհանդերձ, Հայկական տան կամ օջախի ստեղծման հարցը քննարկւում է նաեւ Լոզանի կոնֆերանսում, որը տեղի է ունենում 1922 թուականի նոյեմբերի 20-ից մինչեւ 1923 թուականի յուլիսի 24-ը[4]: Թուրքական կողմը նկատի ունենալով այն հանգամանքը, որ փաստօրէն Լոնդոնի վերոյիշեալ կոնֆերանսում Սեւրի անվաւեր մնացած պայմանագիրը Հայկական հարցի առումով մի կողմ էր դրուել եւ օդի մէջ առաջարկ էր արուել Հայկական օջախի մասին, այստեղ նոյնպէս դրա գոյութիւնը կտրականապէս մերժում է: Այս ամէնի հետեւանքով հայութիւնը զրկւում է Սեւրի չվաւերացուած պայմանագրով իր համար սահմանուած անկախ պետութիւն ունենալու հնարաւորութիւնից: Մինչ այդ՝ յիշեալ խնդիրը քննարկւում էր Թուրքիայի ազգային փոքրամասնութիւնների համատեքստում:

Հայոց ազգային տան հարցի քննարկումներից յետոյ Լոզանի կոնֆերանսում թուրքական պատուիրակութեան դիւանագիտական հետեւողական եւ արհեստավարժ աշխատանքի ու գործադրած յամառ ջանքերի շնորհիւ առաջիկայում կնքուելիք պայմանագիրը մշակելիս հաշուի չեն առնում Մեծ Բրիտանիայի արտգործնախարար լորդ Ջորջ Նաթանիել Քերզոնի կողմից արուած այն առաջարկը, որի համաձայն՝ արեւմտահայութիւնը պէտք է ապրէր սեփական տարածքում: ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի հրատարակած «Հայոց պատմութիւն» բազմահատորեակում կարդում ենք հետեւեալը. «Քերզոնը մատնացոյց էր անում Թուրքիայի ասիական տարածքի որեւէ մաս հիւսիս-արեւելեան նահանգներում կամ Կիլիկիայի ու Սիրիայի հարաւ-արեւելեան սահմանագծի վրայ»[5]: Անտեսւում է նաեւ հայերի միասնական պատուիրակութեան կողմից ներկայացուած յուշագիրը, որտեղ ներկայացուած էին Հայկական ազգային օջախի երեք տարբերակ: Դրանցից առաջինով նախատեսւում էր այն

2 ««Հայկական ազգային օջախ»-ի ստեղծման գաղափարը ծագել է ԱՄՆ հայասէրների միջավայրում և դիւանագիտական շրջանառութեան մէջ դրուել Եւրոպայում»,- կարդում ենք ԳԱԱ պատմութեան ինստիտուտի հրատարակած *«Հայոց պատմութիւն»* բազմահատորեակում (տե՛ս *«Հայոց պատմութիւն»*, հտ. 4, գիրք 1, Եր., 2010, էջ 647): «Հայկական ազգային օջախ» դիւանագիտական եզրոյթը շրջանառութեան մէջ է մտել 1921 թուականի փետրվարի 21-ից մարտի 14-ը տեղի ունեցած Լոնդոնի 3-րդ կոնֆերանսում Առաջին աշխարհամարտում դաշնակից տէրութիւնների կողմից, երբ աշխարհաքաղաքական փոփոխուած պայմանների պատճառով պէտք է վերանայուէին 1920 թուականի օգոստոսի 10-ին կնքուած Սևրի հաշտութեան պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող դրոյթները (տե՛ս *«Հայկական հարց»* հանրագիտարան, Եր., 1996, էջ 223):

3 *Հայոց պատմություն*, հտ. 4, գ. 1, Եր., 2010, էջ 647:

4 *«Հայկական հարց»* հանրագիտարան, Եր., 1996, էջ 161:

5 *Հայոց պատմութիւն*, նշ. աշխ., էջ 649:

ստեղծել ԱՄՆ նախագահ Վուդրոյ Վիլսոնի գծած Հայաստանի տարածքի սահմաններում, երկրորդում առաջարկւում էր ընդարձակել Խորհրդային Հայաստանի տարածքն Արեւմտեան Հայաստանի տարածքի որոշ հատուածով եւ Սեւ ծով ելք ունենալու հնարաւորութեամբ, իսկ երրորդ տարբերակով Հայոց ազգային օջախը պէտք է հիմնուէր Կիլիկիայում[6]:

Թուրքական պատուիրակութիւնը մերժում է այն բոլոր առաջարկները, որոնք կարող էին ինչ-որ կերպ վնասել կամ վտանգ ներկայացնել իրենց պետութեան ամբողջականութեանը, ինչպէս եւ եթէ դրանք հակասում էին Մուստաֆա Քեմալի ու Միլլի շարժման կողմից առաջ քաշուած եւ 1920 թուականի յունուարի 28-ին Թուրքիայի խորհրդարանում ընդունուած ու հաստատուած Թուրքերի Ազգային ուխտին[7]:

Պէտք է նկատի ունենալ, որ բռնութեամբ տարբեր ժողովուրդների պատմական տարածքները զաւթելով եւ հիմնելով հսկայածաւալ կայսրութիւն՝ Թուրքական իշխանութիւնները դրանք մինչ օրս համարում են իրենց հայրենի երկիրը: Նրանք ակնկալում են մասնաւորապէս հայերից, որ երբեւիցէ չպահանջեն Արեւմտեան Հայաստանի գրաւեալ տարածքները՝ միտումնաւոր կերպով մոռանալով դրանց պատկանելութիւնը հայ ժողովրդին ի սկզբանէ, երբ նրանք այդտեղ էին ապրում մարդկութեան ստեղծման ժամանակներից: Հէնց այս մտածողութեամբ էին պայմանաւորուած Լոզանում Թուրքական պատուիրակութեան պնդումները Հայոց ազգային տուն ստեղծելու առաջարկի կապակցութեամբ: Պատուիրակութեան անդամները նշում էին, թէ Թուրքիան այնպիսի տարածք չունէր, «որը կարելի լինէր որեւէ կերպ անջատել մայր հայրենիքից»[8]: Ասում էին, որ հայերն արդէն ունէին անկախ պետութիւն՝ Խորհրդային Հայաստանը, որն էլ նրանց համախմբման օջախը պէտք է դառնար[9]:

Անհրաժեշտ է փաստել, որ խնդրոյ առարկայ ժամանակահատուածում Թուրքիան կարողանում է իր կամքը թելադրել Հայկական հարցում մեծ տէրութիւններին՝ որոշում կայացնելու խնդրում, որոնք, կրկին ելնելով սեփական շահադիտական մօտեցումներից, Լոզանի պայմանագրի մէջ անգամ չեն յիշատակում հայերի ու նրանց իրաւունքների մասին[10]: Լոզանի կոնֆերանսից եւ պայմանագիրը կնքելուց յետոյ արդէն Թուրքիայի Հանրապետութեան համապատասխան կառոյցները մի քանի տարուայ ընթացքում ընդունում են օրէնքներ, որոնցով ոչ միայն փորձում են օրինականացնել հայրենի բնակավայրերից տեղահանուած արեւմտահայութիւնից խլուած նրանց ողջ նիւթական հարստութեան թալանը, այլեւ անհնար են դարձնում նրանց վերադարձն իրենց բնօրրան հայրենիք:

«Թուրքական իշխանութիւններն կայացնում են իրականում ապօրինի որոշումներ եւ փորձում են թաքցնել մարդկութեան դէմ գործած սեփական յանցագործութեան չջնջուող հետքերը: 1923 թուականի սեպտեմբերին Հաշուառման մասին օրէնքում կատարուած փոփոխութեան համաձայն՝ արեւելեան նահանգներից եւ Կիլիկիայից արտագաղթած արեւմտահայերին արգելւում էր վերադառնալ Թուրքիա[11]: «Թուրքիայի Հանրապետութեան պատմութիւն» բուհական դասագրքից տեղեկանում ենք.

6 Նոյն տեղում, էջ 648:

7 **Մելքոնեան Ռուբէն,** *Թուրքիայի քրիստոնեայ փոքրամասնութիւնների խնդիրը Լոզանի բանակցութիւններում. «Հայկական ազգային օջախ»-ի ստեղծման շուրջ քննարկումներ,*- Հայագիտութեան հարցեր, 2020, 1(19), էջ 68-70:

8 *Հայաստանը միջազգային դիւանագիտութեան և սովետական արտաքին քաղաքականութեան փաստաթղթերում (1828-1923)*, Ե., 1972, էջ 749:

9 Նոյն տեղում:

10 «Հայոց պատմութիւն», ՀՀ. աշխ., էջ 649:

11 *Թուրքիայի Հանրապետութեան պատմութիւն*, Եր., 2014, էջ 78:

«1927 թուականի մայիսին հրապարակուեց կառավարութեան օրէնքը, համաձայն որի՝ Թուրքիայի քաղաքացիութիւն չէին ստանում բոլոր նրանք, ովքեր չեն եղել երկրի տարածքում «ազատագրական պայքարի» տարիներին, ինչպէս նաեւ արտասահմանում եղածները՝ 1923-ից (Լոզան) մինչեւ սոյն օրէնքի (1927 թ. մայիս) ընդունումը: Այս որոշումները իրաւական առումով չէզոքացրին հայերի պահանջները սեփականութեան նկատմամբ: Հայ փախստականների Կենտրոնական կոմիտէի միջոցով Ազգերի լիգային ուղղուած բողոքներն անարդիւնք էին, դրանք մերժւում էին Թուրքիայի կողմից»[12]:

Հայոց ազգային տան առաջարկի եւ ընդհանրապէս Հայկական հարցի զարգացումների վերաբերեալ քննարկումները բաւական ակտիւ էին ժամանակի պոլսահայ պարբերականների էջերում: Յատկապէս աչքի էին ընկնում բարձր վարկանիշ ունեցող երկու օրաթերթերի՝ ՀՅԴ Արեւմտեան բիւրոյի «Ազատամարտ» պաշտօնաթերթի իրաւայաջորդ, բայց արդէն մամուլի ոչ պաշտօնական ներկայացուցիչ «Ճակատամարտի» եւ ռամկավարների ոչ պաշտօնական մամուլի օրգան «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ»-ի հրապարակումները: Պէտք է ասել, որ դրանք գրեթէ ամենօրեայ կտրուածքով անդրադարձել են վերոյիշեալ խնդիրներին: Ընդ որում, երկու պարբերականն էլ խիստ մտահոգւում էին արեւմտահայութեան յետագայ ճակատագրին առնչուող իրադարձութիւնների ընթացքով: Լոնդոնի, Լոզանի խորհրդաժողովներում Հայկական հարցի վերաբերեալ ծաւալուած բանավէճերն առաջին էջերում էին տեղ գտնում: Տպագրում էին հայանպաստ ելոյթներ, Հայոց ազգային տուն հիմնելու օգտին բարձրաձայնող խորհրդաժողովականների հետ հարցազրոյցների թարգմանութիւններ արտասահմանեան թերթերից: Հրապարակումների մէջ տեղ էին յատկացնում նաեւ թուրքական պատուիրակութիւնների եւ Քեմալական շարժման ակնառու ներկայացուցիչների, Կ.Պոլսի թուրքական պարբերականների տեսակէտներն այդ առնչութեամբ, որոնք զետեղում էին՝ առանց մեկնաբանութիւնների:

1921-1923 թուականներին «Ճակատամարտը» եւ «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ»-ն իրենց առաջնորդողների ու խմբագրականների համար բաւական յաճախ էին թեմա դարձնում ողջ հայութեանը անհանգստացնող այդ ճակատագրական խնդիրների լուսաբանումը: Կան նաեւ բազմաթիւ վերլուծականներ, որոնցում արտայայտուած են խմբագրութեան անդամների սպասումներն ու ակնկալիքները մասնաւորապէս մեծ տէրութիւններից: Ընդ որում, հարկ է նշել հետեւեալը.

- *«Ճակատամարտը» ու «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ»-ը գրեթէ համակարծիք էին հայութեան յետագայ ճակատագրին վերաբերող հարցերում՝ հասկանալով, որ թուրքական իշխանութիւնների նպատակը արեւմտահայութեան փրկուած բեկորներին հայրենի երկրից դուրս մղելն ու առանց անկիւն թողնելն էր,*
- *ռամկավարների ոչ պաշտօնական մամուլի օրգանը Հայաստանի Առաջին Հանրապետութեան եւ հայոց կարճատեւ պետականութեան կորստի պատճառների վերլուծութեամբ աչքի ընկնող տարբեր յօդուածներում շարունակ մեղադրում էր ՀՅԴ պետական այրերին՝ մասնաւորապէս Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքելու եւ Սիմոն Վրացեանի կողմից Մուստաֆա Քեմալին օգնութեան խնդրանքով դիմելու կապակցութեամբ, ընդ որում, այդ մեղադրանքները բաւական կոշտ էին, եւ յաճախ լրագրողների կողմից հաշուի չէին առնւում*

12 Նոյն տեղում:

պատմական կոնկրէտ եւ հայութեան համար խիստ անբարենպաստ հանգամանքները,

- ՀՅԴ ոչ պաշտօնական մամուլի օրգանն իր հերթին մի շարք յօդուածներում փորձում էր արդարացնել Հայաստանի Առաջին հանրապետութեան պետական այրերի դիւանագիտական առումով բաւական դատապարտելի քայլերը՝ յատկապէս մատնանշելով Ալեքսանդրապոլի պայմանագրի իրաւական հիմքերի բացակայութիւնը,
- երկու պարբերականն էլ Հայկական հարցի անբարեյոյս վիճակի պատճառների մէջ կարեւոր տեղ էին յատկացնում խորհրդաթուրքական համագործակցութիւնը, այդ տարիներին կնքուած ռուս-թուրքական պայմանագրերը՝ ընթերցողների ուշադրութիւնը հրաւիրելով դրանց հակահայկական բովանդակութեան եւ Հայկական հարցը փակուղի մտցնելու վտանգների վրայ:
- Պոլսահայ վերոյիշեալ պարբերականների հրապարակումների վերլուծութիւնը մեզ բերում է այն համոզման, որ Հայկական հարցի համար ստեղծուած անբարենպաստ աշխարհաքաղաքական պայմանները նրանց զգուշաւոր էին դարձրել, եւ արդէն 1923 թուականի երկրորդ կէսից թերթերում գրեթէ չկային Հայոց ազգային տան կամ արեւմտահայերի յետագայ ճակատագրին առնչուող յօդուածներ, անգամ լուրեր:
- 1923 թուականի երկրորդ կէսից առաջ յիշեալ պարբերականների հրապարակումներից պարզ էր նրանց մօտեցումը, այն է՝ իրենց պատմական հայրենիքում ապրելու իրաւունք այլեւս չունեցող արեւմտահայերը, որոնք հիմնականում ստիպուած լքում էին երկիրը, յատկապէս դիւանագիտական ոլորտում յայտնուած հայրենադարձութիւն դէպի Խորհրդային Հայաստան կամ արտագաղթ տարբեր երկրների հայկական գաղթօջախներ, այս ամէնի հետեւանքով դատապարտուած էին սփռման աշխարհով մէկ:

Արտագաղթած կամ այլ երկրներում ստիպուած հանգրուանած հայ տարագիրների համար վտանգներ կային ուծացման առումով: Բացի այդ՝ նշուած ժամանակահատուածում Խորհրդային Հայաստանը Մեծ եղեռնից փրկուած արեւմտահայերի զգալի մասը չէին համարում իրենց հայրենիքը եւ Հայաստան ասելով՝ հասկանում էին Արեւմտեան Հայաստանը կամ Վուդրոյ Վիլսոնի գծած սահմաններով ապագայ Հայաստանի տարածքը: Նրանք հէնց իրենց հայրենի բնակավայրերում էին ցանկանում ոչ միայն ապրել, այլեւ ունենալ եթէ ոչ պետականութիւն, ապա առնուազն ազգային ու մշակութեային ինքնավար կեանք՝ թէկուզ Հայոց օջախի սահմաններում: Այս շրջանում նշուած մտահոգութիւններով էին համակուած ստեպ-ստեպ «Ճակատամարտի» եւ «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ»-ի էջերում տպագրուող վերլուծականները:

Վերն ասուածը հիմնաւորենք «Ճակատամարտից» եւ «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ»-ից ընտրած բնորոշ յօդուածներով: «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» օրաթերթը 1921 թուականի մայիսի մէկի համարում մէջբերումներ էր անում Կ.Պոլսի թուրքական թերթերից, որոնցում թուրք խմբագիրներն ու լրագրողները վերլուծում էին իթթիհատական իշխանափոխութիւնից յետոյ հայերի հետ համագործակցութեան ծրագրերը եւ Հայոց քաղաքական էլիտայի որդեգրած քաղաքականութիւնը[13]: «Հայերը Արեւելքի է՛ն մաքուր եւ թուրքերուն ամէնէն մօտ գտնուող մէկ տարր են: Դարերով

13 «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ», Կ. Պոլիս, 1921, թիվ 4083 («Թուրքեր-հայեր»):

միասին եւ բարւոք յարաբերութեամբ ապրող Թուրքերը ու հայերը համիտեան ռէժիմին հայ կուսակցութեանց գրգռումներուն հետեւանքով եւ իթթիհատական շրջանին ալ այդ կուսակցութեանց եւ իթթիհատի յոռի քաղաքականութեան բերմամբ իրարու հետ գժտեցաւ, զիրար զարկին ու կոտորուեցան»[14], - գրում էր «Ալեմդարը»: Ապա կոչ էր անում, որ Առաջին աշխարհամարտի աւարտից յետոյ, երբ Իթթիհատն ու հայկական կուսակցութիւնները Թուրքիայում այլեւս արգելուած էին, նախկինում իրար սիրող եւ հասկացող հայերն ու Թուրքերը վերադառնային անցեալում հաստատուած բարիդրացիական յարաբերութիւններին[15]: «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ»-ը, սակայն, հանդէս չէր գալիս որեւէ մեկնաբանութեամբ եւ չէր բերում փաստեր, թէ իրականում դարեր շարունակ Թուրքական իշխանութիւններն ինչ հայահալած ու հայասպան քաղաքականութիւն էին իրականացրել: Տպաւորութիւնն այնպիսին էր, որ թերթի խմբագրակազմը կիսում էր Թուրք լրագրողի տեսակէտները: Այնինչ դա այդպէս չէր, եւ հաւանաբար գրաքննութեան պատճառով էր պարբերականը իրեն չէզոք պահել: Ասուածի վկայութիւնն է մէկ այլ թղթակցութիւն, որը Լոնդոնից ուղարկել էր թերթի մասնաւոր թղթակից Արշակ Սաֆրաստեանը[16]: Նա իր մեկնաբանութիւններով թարգմանաբար ներկայացնում էր Լոնդոնի թերթերից մէկին Հայոց ազգային տան թեմայով Ալի Ցեթհի Օքեար բէյի տուած հարցազրոյցից հատուածներ: Թուրք դիւանագէտի եւ քաղաքական յայտնի այդ գործչի հետեւեալ խօսքերն առաւել քան բնորոշում էին նրա պետութեան որդեգրած ուղղութիւնը Հայկական հարցում: Նա ասում էր.«Թուրքիոյ մէջ Հայաստան չկայ»[17]: Անգլիացի յօդուածագիրը գրում էր. «Ցէթհի պէյի պատասխանը ո եւ է տարակոյս չը թողուց, որ իր կառավարութիւնը անհաշտ պիտի գտնուի հանդէպ ո եւ է հողային զիջողութեան, նոյն իսկ չափաւոր ձեւով հայկական ինքնավար մի նահանգի՝ Թրքական ներկայ սահմաններէն ներս: Ցէթհի պէյ վճռապէս կարգադրուած կը նկատէ Թուրքիոյ եւ Երեւանի ներկայ սահմանները՝ դաշնագրով կնքուած թէ՛ հայ հանրապետութեան եւ թէ՛ Մոսկուայի ռուս կառավարութեան հետ եւ թէ՛ այդ սահմանները տեւական են անդառնալիօրէն»[18]: Արամ Սաֆրաստեանը թղթակցութիւնն աւարտում էր հռետորական հարցով, այն է՝ Թուրք պաշտօնատար անձինք, ի տարբերութիւն Ցեթհի բէյի, բարոյական քաջութիւն կ՚ունենա՞ն հայերի հանդէպ վարելու հաշտարար քաղաքականութիւն. «Գուցէ դեռ փակուած չեն ճանապարհները»[19]: Նա նաեւ նշում էր. «Անտեսել նախագահ Ուիլսընի գծած հայկական սահմանները եւ Սէւռի դաշնագիրը եւ պնդել միմիայն «Ազգային ուխտ»ի վրայ, ո՛չ մի քայլ առաջ չի տանիր մեզ: Մօտ կէս միլիոն տաճկահայեր այժմ ցիրուցան ու թափառական, կ՚սպասեն մի առիթի՝ վերադառնալու իրենց հայրենիքը ու վերաշինելու իրենց տներն ու տնտեսութիւնը»[20]:

Խմբագրականներից մէկում «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ»-ն իրաւացիօրէն փաստում էր, որ Առաջին աշխարհամարտում պարտուած եւ իր պատժին սպասող Թուրքական պետութիւնը «խաղաղօրէն ապրող ժողովուրդի մը վրայ ինկաւ եւ խլեց անոր հողերուն մեծ մասը եւ անլուր ու քստմնելի խժդժութիւններու մատնեց անոր բնակչութիւնը... Թուրքերը տեղահանած եւ ջարդած են հարիւր հազարաւոր

14 Նոյն տեղում:

15 Նոյն տեղում:

16 Նոյն տեղում, 1922, թիւ 4465 («*Հայ-թրքական յարաբերութիւններ*»):

17 Նոյն տեղում:

18 Նոյն տեղում:

19 Նոյն տեղում:

20 Նոյն տեղում:

հայեր, կողոպտած են անոնց ամբողջ ունեցածները»[21]: Խմբագրակազմը համոզուած պնդում էր, որ Ֆեթհի բէյն իրաւունք չունէր հռչակել արեւմտահայերին «ափ մը հող չտալու վարդապետութիւնը»[22] ուրանալով հայերի հետ կատարուած իրողութիւնները եւ ասելով. «Հայ ժողովուրդի հարցը վերջնականապէս փակուած է Երեւանի եւ Մոսկուայի հետ կնքուած դաշնագրերով, եւ ներկայ սահմանները տեւական են եւ անփոփոխելի»[23]:

Այն էր թերեւս թերութիւնը խմբագրութեան աշխատակիցների այս մօտեցումներում, որ նրանք, դասեր չքաղելով մօտիկ անցեալից, կրկին յոյսեր էին կապում մեծ տէրութիւնների հետ, որոնք իբրեւ թէ պաշտպանելու էին արեւմտահայութեան իրաւունքները. «Քաղաքակիրթ ազգերու ժողովը որոշած է, որ հատուցում մը ըլլայ այս ժողովուրդի մնացորդին՝ ազատ ու անկախ ապրելու իրաւունքով մը սեփական հայրենիքի մը մէջ... ի՛նչ յամառութիւնով, որ թուրքեր կ՚ուրանան իրողութիւնները եւ կ՚աշխատին խաչել արդարութիւնը, նոյն յամառութիւնով հայ ժողովուրդը պիտի կառչի իրողութիւններուն, իրաւունքին եւ արդարութեան»[24]:

1923 թուականի օգոստոսի մէկին «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ»-ն, առանց մեկնաբանութեան, թարգմանաբար տպագրել էր Լոնդոնի «The Times» օրաթերթում զետեղուած մի նամակ՝ «Հայ մը» ստորագրութեամբ[25]: Այնտեղ այն միտքն էր արտայայտուած, որ «պետութեանց միջամտութիւնը միշտ վնասակար եղած է հայերուն»[26]: Նամակագիրը վստահեցնում էր. «Վերջին 45 տարիներու փորձառութիւնը մեզի ցուցուցած է, որ մեծ պետութեանց կողմէ հայերու ի նպաստ եղած ամեն միջամտութիւն տեղի տուած է շարք մը դժբախտութիւններու»[27]: Նա դաշնակից երկրներին առաջարկում էր հանգիստ թողնել հայերին ու չմիջամտել Հայկական հարցի լուծման գործին[28]: Հնարաւոր էր, որ հայութեան համար այդ խառնակ օրերին «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» պարբերականը համակարծիք էր այդ նամակում հնչեցուած տեսակէտներին:

«Ճակատամարտ» օրաթերթին նոյնպէս մտահոգում էին միջազգային տարբեր խորհրդաժողովներում քննարկուող արեւմտահայութեան յետագայ ճակատագրի եւ այդ համատեքստում Հայոց ազգային տուն հիմնելու գաղափարին կողմ եւ դէմ տեսակէտների բախման վերջնական արդիւնքը: Պարբերականը մի շարք յօդուածներում հանգամանօրէն անդրադառնում էր Ալեքսանդրապոլի պայմանագրի կնքման հանգամանքներին եւ իրաւական առումով դրա լեգիտիմութեան հարցին, Հայաստանի Առաջին հանրապետութեան խորհրդայնացման գործընթացին, ծայր առած ու տապալուած փետրուարեան ապստամբութեանը եւ դրա պարտութեան պատճառներին, ռուս-թուրքական համաձայնութեանը եւ կնքած պայմանագրերին, որոնք առնչւում էին Հայկական հարցին: Յատկապէս բնորոշ էր Փարիզից ուղարկուած «Հայաստան խորհրդաժողովին առջեւ» մասնաւոր թղթակցութիւնը[29]: Այստեղ ներկայացուած էին Լոնդոնի խորհրդաժողովի այն նիստի մանրամասները, որտեղ ելոյթ էին ունեցել հայկական պատուիրակութեան ղեկավար-

21 Նոյն տեղում, 1922, թիւ 4466 («*Ափ մը հող չեն տար*»):

22 Նոյն տեղում:

23 Նոյն տեղում:

24 Նոյն տեղում:

25 Նոյն տեղում, 1923, թիվ 4753 («*Պետությանց միջամտությունը միշտ վնասակար եղած է հայերուն*»):

26 Նոյն տեղում:

27 Նոյն տեղում:

28 Նոյն տեղում:

29 «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1921, թիւ 709 («*Հայաստան խորհրդաժողովին առջև*»):

ները՝ Պօղոս Նուբարն ու Աւետիս Ահարոնեանը: Ըստ այս հրապարակման պարունակած տուեալների՝ վերջինները կարծես չէին ուզում ընդունել պատմական նոր իրողութիւնը, որն այլեւս նպաստաւոր էր Թուրքական պետութեան ապագայի համար: Այսինքն՝ դաշնակիցներն արդէն հաշուի չէին առնում Սեւրի պայմանագիրը եւ հակուած էին Թուրքիայի հետ հաշտութեան նոր պայմանագիր կնքելուն, որտեղ նկատի էին ունենալու հէնց նրանց պահանջները Հայկական հարցի առումով: Ու կարեւոր չէին մեր պատուիրակների բերած բոլոր իրաւացի եւ արդար փաստարկները Հայոց դատի պաշտպանութեան տեսանկիւնից, քանի որ նրանց առջեւ դնում էին Խորհրդային Հայաստանի գոյութեան, Թուրքական իշխանութիւնների հետ խորհրդային կառավարութեան համագործակցութեան, հայաթափուած Արեւմտեան Հայաստանի եւ այլ հակափաստարկներ: Իբրեւ բնորոշ օրինակ բերենք Ա. Ահարոնեանի ելոյթից այս հատուածը. «Անծանօթ են ինձի դաշնակիցներու նոր տեսակէտները, որոնք հետեւանք են նոր հանգամանքներու: Բայց Հայաստանի կառավարութեան համար այդ նոր հանգամանքները ոչ մէկ ձեւով չեն կրնար խախտել Սէւրի դաշնագրին տրամադրութիւնները՝ յօգուտ մեր երկրին... մենք չենք կրնար այդ դաշնագրէն հրաժարիլ: Թուրքերը... կ'ըսեն, թէ Կովկասեան Հայաստանը պոլշեւիկ դարձած է, եւ թէ Թրքահայաստանի մէջ ալ հայ չկայ, հետեւաբար հայ պետութիւնը այլեւս չի կրնար գոյութիւն ունենալ՝ առանց Հայաստանի»[30]: Նա վստահեցնում էր, որ անկախ այն հանգամանքից, որ մեծ տէրութիւնները Հայկական հարցը յօգուտ հայերի չլուծեն, հայ ժողովուրդը «երբէք իր նուիրական հողերէն չպիտի հրաժարի»[31]: Այս խօսքերին Պօղոս Նուբարն աւելացնում էր հետեւեալը. «Այսքան զոհողութիւններէ ետք հայ ժողովուրդը չի կրնար հրաժարիլ Սէւրի դաշնագրով իրեն տրուած իրաւունքներէն: Եթէ պոլշեւիկները գրաւած են Կովկասեան Հայաստանը, այդ փաստը չի կրնար ոչնչացնել հայ պետութիւն կազմելու մեր իրաւունքները, քանի որ Թրքահայաստանի հողերը կան: Այդ հողերն են, որ կը կազմեն հայ պետութեան հիմունքը, եւ Հայկական հարցը անոնց կապուած է իր ծագումով»[32]: Այստեղ պէտք է նշել, որ իրականում Ա. Ահարոնեանն ու Պ. Նուբարը Լոնդոնի խորհրդաժողովում հասկացնել էին տալիս, որ Հայկական հարցի բովանդակութիւնը փոխուել էր՝ բարենորոգումների խնդրից վերածուելով իր պատմական տարածքներում միացեալ ու անկախ պետականութիւն ձեռք բերելու պահանջատիրութեան, որն ամրագրուած էր թէկուզ Սեւրի միջազգային պայմանագրով ու ԱՄՆ նախագահ Վուդրոյ Վիլսոնի գծած Իրաւարար վճռի միջազգային իրաւունքի փաստաթղթով: Պարզապէս այդ խնդրով առ այսօր չեն զբաղուել ոչ խորհրդայնացուած, ոչ էլ անկախացած Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնները: Իսկ ժամանակին Լոզանի խորհրդաժողովը, սակայն, յօդս էր բարձրացրել հայութեան յոյսերն՝ իրենց հայրենի հողերում գէթ ազգային օջախ ունենալու հարցում:

«Հայկական հարցը Լոզանի մէջ» ենթավերնագրի ներքոյ համարեայ ամենօրեայ կտրուածքով ներկայացուող նիւթերը պատկերացում էին տալիս Հայոց ազգային տան առաջարկի շուրջ ծաւալուող քննարկումների, տեսակէտների բախման եւ ընդհանուր տրամադրուածութեան մասին: Դրանք տարբեր երկրներում Մեծ եղեռնից յետոյ ապաստանած արեւմտահայութեանը որեւէ դրական բան չէին խոստանում: 1922

30 Նոյն տեղում:

31 Նոյն տեղում:

32 Նոյն տեղում:

թուականի դեկտեմբերի 16-ի համարում, օրինակ, «Ճակատամարտն» ընթերցողներին տեղեկացնում էր, որ Լոզանի կոնֆերանսին մասնակցող թուրքական պատուիրակութիւնը դէմ էր Հայոց ազգային տան ծրագրին՝ ասելով. «Հայերը ապագային կրնան համերաշխօրէն ապրիլ թուրքերուն հետ, անոնք պաշտպանութեան պէտք չունին, եւ Հայ ազգային տան խնդիրը ընդունելի չէր»[33]: Թուրքական թերթերից մէկից թարգմանաբար տպագրած յօդուածում գրուած էր հետեւեալը Հայոց ազգային տան հետ կապուած վերլուծականում. «Մենք այս երկրին մէջ չենք կրնար յոյներուն եւ հայերուն հետ ապրիլ... կամ մենք պէտք է ելլենք, կամ անոնք... Խորհրդաժողովը ի՛նչ կ՚ուզէ թող մտածէ եւ ինչ որոշում կ՚ուզէ թող տայ, մեր բուն նպատակը, մեր որոշումը եւ մեր ուզածը պէտք է, որ ըլլայ: Ո՛չ մէկ ուժ չի կրնար մեզ ետ դարձնել այդ որոշումէն»[34]: Կրկին թուրքական մամուլից արտատպած նիւթում Թուրքիայում ապրելու համար պահանջում էին հրաժարուել առանձնաշնորհումներ ունենալու եւ հայկական տուն հիմնելու պահանջներից. «Անմտութիւն է կարծել, որ մեր կողմէ գիտակցօրէն հաւանութիւն պիտի յայտնուի այս տեսակ բանի մը համար: Ոչ մէկ թուրք պիտի գտնուի՝ Հայկական տունի մը պահանջը ընդունող... մեր որոշումը վճռական եւ մեր հաստատամտութիւնը անյողդողդ է ինչպէս յունական, նոյնպէս եւ Հայկական տան հարցին մասին... ասկէ վերջ Թուրքիան թուրքերուն է»[35]:

«Ճակատամարտը» վերլուծում էր իր յօդուածներում եւ խմբագրականներում Հայոց ազգային տուն հիմնելու խնդրին առնչուող իրաւարարութիւնները, միջազգային խորհրդաժողովներում ծաւալուող քննարկումներն ու առաջարկները, ինչպէս նաեւ Հայկական հարցն էր նրա ուշադրութեան կենտրոնում: Մեծ եղեռնից յետոյ աշխարհով մէկ ցիրուցան եղած հայութեանն իր բնօրրան հայրենիք վերադառնալն արգելող օրէնքներից ու որոշումներից քաջատեղեակ օրաթերթը գրում էր. «Մեր փնտռածը գաղութ չէ... մէր ժողովուրդին ապագայ գոյութիւնը կը պահանջէ ոչ թէ աւելի եւս շեշտել նախկին ցրուած վիճակը, այլ, ընդհակառակը, կեդրոնաձիգ զօրաւոր ուժով մը մէկտեղել հեռաւոր գաղութները... այս տեսակէտով յարմարագոյն լուծումն է ոչ թէ աչքերը յառել հեռաւոր ովկիանոսներու, այլ բուն իրականութեան՝ Հայաստանի Հանրապետութեան, ինչքան ալ անողոք ըլլան հոն տիրող քաղաքական եւ տնտեսական պայմանները՝ ցեղը բարոյական մահացումի չենթարկելու համար»[36]:

Պարբերականը կարեւորում էր ազգային դիմագծի պահպանումը տարբեր երկրներում յայտնուած հայերի համար՝ կոչ անելով նրանց միայն իրենց ֆիզիկական ապահովութեամբ չբաւարարուել, վերջնական բնակութիւն չհաստատել Մայր հայրենիքից անչափ հեռու երկրներում[37]: «Մեր գլխաւոր ճիգը պիտի ըլլայ մարմնով ալ, ոգիով ալ ողջ պահել այս հալածական բազմութիւնները, ուշ-կանուխ զանոնք հայրենիք փոխադրելու համար: Ուրիշ խնդիր, եթէ որոշեր են զանոնք վերածել բոշաներու սերունդի մը: Այն ատեն թող երթան ոչ միայն մինչեւ Պրազիլիայ, այլեւ Հրոյ Երկիր, Իսլանտիայ, Կրօէնլանտայ կամ Զանզիպար,- ուր որ կարելի է մորթը պահել եւ հաց ճարել... ձուլումը անխուսափելի է այդ խառնածին վայրերուն մէջ»[38],- ահա այսպէս էր կարծում «Ճակատամարտը»:

33 Նոյն տեղում, 1922, թիւ 3068 («*Ցաւիտենական փոխանցումը*»):

34 Նոյն տեղում («*Կամ ամեն ինչ, կամ բնաւ*»):

35 Նոյն տեղում, 1922, թիւ 3079 («*Մեր գլխուն Հայկական հարց մը՝ ալ կը հանեն*»):

36 Նոյն տեղում, 1922, թիւ 3063 («*Մեր փնտրածը գաղութ չէ*»):

37 Նոյն տեղում, 1922, թիւ 3076 («*Բոշաներու սերունդ*»):

38 Նոյն տեղում:

Ամփոփելով՝ կարող ենք փաստել հետեւեալը:

Պոլսահայ վերոյիշեալ պարբերականների հրապարակումների վերլուծութիւնը մեզ բերում է այն համոզման, որ Հայոց ազգային տան կամ արեւմտահայերի յետագայ ճակատագրին առնչուող խնդիրները եղել են նրանց համար առաջնային: «Ճակատամարտի» եւ «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ»-ի էջերում տպագրուող վերլուծականները, հարցազրոյցները եւ թարգմանական նիւթերն ասուածի վկայութիւնն են: Կուսակցական տարբեր պատկանելութեան այս օրաթերթերը համակարծիք էին Մեծ եղեռնին, արեւմտահայերի ունեցուածքի իւրացմանը, հայրենազրկմանը եւ ապագային առնչուող հարցերում, այդ թւում՝ առնուազն Հայոց ազգային տուն ունենալու, իսկ դրա անհնարինութեան դէպքում՝ Խորհրդային Հայաստանի շուրջ համախմբուելու կամ այնտեղ ապրելու տեսակէտներում: Պարբերականների էջերում ամփոփուած վերլուծական յօդուածներում տեսնում ենք, թէ ժամանակի պահանջների թելադրանքով ինչպէս են փոխւում լրագրողների տեսակէտները Հայկական հարցի բովանդակութեան առումով: Նրանք յանգում են այն եզրակացութեան, որ հայութեան յետագայ համախմբման եւ ուծացումից փրկուելու համար անհրաժեշտ է պաշտպանել պետականութիւն ունենալու գաղափարն ու վառ պահել բռնազաւթուած հայրենիքին վերատիրանալու պայքարի ջահը՝ չբաւարարուելով Ազգային տուն ունենալու սին խոստումներով: Աւելացնենք, որ հայոց պահանջատիրութեան եւ Հայկական հարցի լուծման հիմնական տարբերակներից մէկն այն կարող է լինել, որ հայերն ունենան տնտեսապէս հզօր եւ բարգաւաճ պետութիւն՝ պաշտպանական ամուր համակարգով: Դրան հասնելու առաջին քայլը ազգային մտածողութիւն եւ գործելու վճռական կամք ունեցող նուիրեալ անձանց մուտքի ապահովումն է պետական ապարատում, ինչպէս նաեւ համահայկական հաւատամքի մշակումն ու աճող սերնդին դրա ուսուցումն է յաջողութեան հասնելու ճանապարհը: Հաւատամք, մարդիկ, ազգային շահի գերակայութեան քաղաքականութեան վրայ հիմնուած պետական ճկուն դիւանագիտութիւն. այս երեք բաղադրիչների համադրման շնորհիւ, թերեւս, կարելի է հասնել մեր արդարացի պահանջների պարտադրմանը միջազգային յարաբերութիւնների ասպարէզում: Ամենակարեւորը դիւանագիտութեան ոլորտում ռոմանտիզմից հրաժարուելն է եւ այն սկզբունքին հետեւելն է, որ դիւանագիտական յարաբերութիւնների հիմքում արդարութիւնը չի ընկած, այլ դրանցում առաջնայինը շահերն են: Կարեւոր կռուաններ են պատմական աստեղային ժամը բաց չթողնելը եւ նպաստաւոր հանգամանքներից օգտուել կարողանալը: